Ձև N 1

Հայտարարություն

« Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

(պետական հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը)

վարչատնտեսական մասի համակարգողի թափուր տեղը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ հաստատություն) վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի համաձայն՝

«Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

(ուսումնական հաստատության անվանումը)

համակարգողի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր:

1. Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
2) բարձրագույն կրթությունը:

2. ***Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝***

1) դիմում (Ձև N 2-ին համապատասխան).
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) բարձրագույն կրթությունն հավաստող փաստաթուղթը (դիպլոմը).
4) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.
5) ինքնակենսագրություն (Ձև N 3-ին համապատասխան):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում (syuniq.andznakazm@mta.gov.am)՝ բնօրինակները ներկայացնել մրցույթի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմում (հասցե՝ ք.Կապան, Նժդեհի 1, սենյակ 201):

(լիազոր մարմնի անվանումը և հասցեն)

2023 թվականի **նոյեմբերի** 15-**ից մինչև դեկտեմբերի** 5-**ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև ժամը 17^{00}-ը (ընդմիջում՝ ժամը 13^{00}-ից 14^{00}-ը), բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Լիազորված մարմնի ղեկավարը հավակնորդների փաստաթղթերը՝ հայտերն ընդունելու ժամկետն ավարտվելուց 2 աշխատանքային օրվա ընթացքում ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում է հարցազրույց: Հարցազրույցի դրական արդյունքի դեպքում լիազորված մարմնի ղեկավարը հավակնորդներից մեկի հետ (եթե հավակնորդների թիվը մեկից ավելի է) կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ պահպանելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով սահմանված պահանջը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (0285)4-42-75 (անձնակազմի կառավարման բաժին), (0285)4-35-45 (Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն):

3x4

լուսանկար

<u>Ձև N</u> 2
Հայաստանի Հանրապետություն
Սյունիքի մարզպետի աշխատակազմ
Սյունիքի մարզպետ
պարոն Ռոբերտ Ղուկասյանին

_____ -ից
հավակնորդի անունը, հայրանունը, ազգանունը

_____
հավակնորդի հաշվառման վայրը

_____
հավակնորդի հեռ. (աշխ., բնակ., բջջ.)

_____
անձնագրի կամ նույնականացման քարտի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

ծնված _____
օրը, ամիսը, տարին, վայրը

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթացել եմ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից «**Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համակարգողի նշանակման** մասին հայտարարությանը և ցանկանում եմ մասնակցել թափուր տեղի համալրման համար անցկացվող հարցազրույցին:

Իմ մասին հայտնում եմ.

Քաղաքացիությունը

_____
(Հայաստանի Հանրապետության, իսկ երկքաղաքացիության դեպքում՝ նշել կարգավիճակի ստացման ժամկետը և երկիրը)

Հայտնում եմ, որ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված սահմանափակումներ չունեմ:

Համակարգչային գրագիտությունը

_____

_____

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Դիմումին կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը

_____

(բնօրինակների հետ, բնօրինակները կներկայացվեն հարցազրույցի օրը)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող _____ «_____» _____ 2023 թ.

ստորագրություն

Ձև N 3

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունը, հայրանունը, ազգանունը	
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	
Ծննդյան վայրը, երկիրը	
Հաշվառման բնակավայրը	
Մշտական բնակավայրը	
Քաղաքացիությունը	
Այլ քաղաքացիություն, եթե կա	
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)	
Օտար լեզուների իմացությունը. բանավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Օտար լեզուների իմացությունը. գրավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Ուսումնառությունը, կրթությունը. (թվել կրթօջախները, տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Աշխատանքային գործունեությունը. (թվել աշխատավայրը (աշխատավայրերը), տարիները, պաշտոնը (պաշտոնները)	
Մասնագիտական ոլորտներում գործունեության փորձի նկարագիրը. (թվել հիմնարկը (հիմնարկները) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները), տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Վերապատրաստումները. (թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը)	
Այլ տեղեկություններ. (գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևներ: Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումները)	
Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում տրամադրել	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային հասցե	
Փոստային հասցե	
Անհատական բլոգը կամ համացանցային էջը (առկայության դեպքում)	